ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«3» հունիսի 2026 թ. N 79-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՆԵՐԴԻՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորող հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 20-ի N 13 և 2026 թվականի մայիսի 6-ի N 15 արձանագրությունները

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել «ԱՐԽԻՏԵԿՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառում «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն» 2-րդ դասի ՔՊԼ-002413 լիցենզիայի «Ինժեներաերկրաբանական հետախուզում» ենթատեսակի ՔՊՆ-002413-11 ներդիրի գործողությունը: Կասեցման ժամկետ սահմանել մեկ տարի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Պարտականությունները կատարող՝

Ստորագրող
ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2102800415

2026-06-03 17:11:25 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆ